

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Կ. Լ. ՕՐՈՎ.

ԿՈՎ Ի ՅԵՎ, ՀՈՐԹԻ

ԽՆԱՄԲԸ

636.2

L-74

1932

ՀՐԱՍԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

24 SEP 2010

Ն. ԼՈՍՈՎ,


636.2

Լ-74

ԿՈՎԻ ՅԵՎ ՀՈՐԹԻ Խ Ն Ա Մ Բ Ը

Թարգ. Գ. Գ. Լ. Ն. Մ.

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍՍՅՈՒՆ ԿՈՎԿԱՍ»
ՈՒՍՏՈՎ ԴՈՆ 1982 թ.



49076 KM

ՎԱԳ-ԵՐԻ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՎԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԵԶ

Հյուսիսային կովկասը Խորհրդային Միության առաջին ուսյուններից մեկն է, վոր ավարտեց համատարած կուլեկտիվացումը և դրա հիման վրա կուլակուլթյան վերացումը՝ վորպես դասակարգ: Գյուղացիական մանր տնտեսուլթյունների փոխադրուլթյամբ խոշոր կուլեկտիվ տնտեսուլթյունների և լավագուլին մեքենաներ, պարարտանյուլթեր և գիտուլթյան ու տեխնիկայի բոլոր նվաճուլթները գործադրելու ընդունակ խորհտնտեսուլթյունների կազմակերպումը, ներկայուլում հացահատիկային խնդիրը հիմնականում լուծված է:

Կուլակցուլթյունը հեշուլթյամբ ձեռք չբերեց այդ հաղթուլթյունը: Այդ հաղթուլթյուններին հասնելու համար պետք էր հաղթահարել կուլակուլթյան կատաղի դիմադրուլթյանը՝ համատարած կուլեկտիվացում անցկացնելու ժամանակ, ջարդել աջ ոպորտունիստներին, վորոնք հրում էին կուլակցուլթյունը դաշնակցելու կուլակուլթյան հետ և վերջնականապես ջարդել «ձախ» ոպորտունիստներին և հակահեղափոխական տրոցկիստներին:

Լուծելով հացահատիկային խնդիրը, ժողովրդական տնտեսուլթյան այդ հիմնական խնդիրներից մեկը, կուլակցուլթյունն ընդհուլ ձեռնարկեց լուծելու վոչ պակաս կարևորուլթյուն ունեցող անասնաբուլծական խնդիրը: Հացահատիկային ճակատում ունեցած հաղողուլթյունները պարզորեն ցուլց ավին, վոր անասնաբուլծական խնդրի լուծման ուղիները սուլջն են, ինչ վոր հացահատիկային խնդիրը լուծելիս, այսինքն՝ սոցիալիստական անասնաբուլծային խոշոր սնեսուլթյան՝ խորհսնեսուլթյունների յեվ կոլսնեսուլթյան ապրանքային ճեքմաների ժեքմաներուլթյուն: Թե վորքան մեծ նշանակուլթյուն է արվում այդ խնդրին, յեևում է կուլակցուլթյան կենտրոնական կոմիտեյի յեվ ժողկոմխորհի դիմումից, վորտեղ սոված է՝

«Համարել անասնաբուլծական բնագավառում սոցիալիստական սեկտորի—խորհսնեսուլթյունների յեվ կոլսնեսուլթյան ապրանքային ճեքմաների աշխատանքի կազմակերպումն ու ամբապնդումը գյուղասնեսուլթյան բնագավառում—վորպես

մոտիկ ժամանակվա կենտրոնական խնդիր: 1931 յեվ 1932 յիականները պետք է լինեն անասնաբուլծուլթյան ժավարման բնագավառում բեկման նուլցալիսի սարիներ, ինչպիսին էլին 1929 յեվ 1930 յիականները սոցիալիստական հացահատիկային սնեսուլթյան կազմակերպան գործում:

Մեղ մոտ, յերկրամասում կարձ ժամանակամիջոցում առ 1932 թվի հոկտեմբերի 1-ը կազմակերպված է.—կոլտնտեսային ապրանքային ֆերմա՝ 402.060 գլուխ կովերով, խոզապրանքային ֆերմա՝ 394.736 գլուխ կոկով, վոչխարաբուլծային ֆերմա՝ 900.100 գլուխ վոչխարներով և թուլնաբուլծական կոլտնտեսային ապրանքային ֆերմա՝ 500.000 հասակավոր և 2 միլմատողաջ թուլուններով:

Համեմատաբար ԿԱՑ-երի կարձ ժամանակի աշխատանքի վործը ցուլց ավեց, վոր յեթե անհատական տնտեսուլթյան ապրանքայնուլթյունը, այսինքն՝ արտադրանքի այն մասը, վորը վաճառելի յե դուրս բերվում, հավասար է 10—20 տոկոսի—ԿԱՑ-երի ապրանքայնուլթյունը հասնում է 70 տոկոսի:

Յեվ դա հասկանալի յե: Չե վոր անհատական տնտեսուլթյունով ոգտադործվող անասնի կաթնարդյունավորուլթյունը շատ ցածր է, վորովհետև մանր տնտեսուլթյուններում ըստ արդյունավորուլթյան անասունների ընտրուլթյուն չեր կատարվում՝ հնարավորուլթյուն չլինելու պատճառով: Նախ կար ծնվածների աճեցման և լավացման դժվարուլթյուն, արժեքավոր յեղների ոգտադործման միջոցով (հոտային զուգավորում, հասարակական յեղների պատահական ընտրուլթյուն): Ապա մանր անհատական տնտեսուլթյունը հնարավորուլթյուն չուներ կանոնավոր կերպով կերակրել և պահել անասուններին, վորովհետև սակավ դեպքերում միայն նա կարող էր ունենալ կերի բավականաչափ պաշար և հարմար շենք:

Միայն մասնագիտացրած սոցիալիստական տնտեսուլթյունը կարող է նպատակահարմար կերպով ապահովել իրեն կերով (սիլոսային խոշոր աշտարակները և այլն): Միայն ԿԱՑ-երը կարող են լայն կերպով կիրառել մեքենայացումը, վորը մանր անհատական տնտեսուլթյան համար բոլորովին անմատչելի յե: Իսկ մեքենայացումը մի քանի անգամ բարձրացնում է աշխատանքի արտադրողականուլթյունը, պակասեցնում է անասուններին խնամելու ծախսերը, ամբողջ տնտեսուլթյունն ավելի շահավետ դարձնում:

Այսպիսով կան բոլոր հնարավորուլթյունները մոտիկ տարիներում կրկնապատկել անասունների արդյունավետուլթյունը

33685-62

734053

2012

կանոնավոր կերպով կերակրելու, արդյունավետ անասունների ընտրութեամբ և վերջնապես, հորթերին կանոնավոր աճեցնելու և ցեղային անասունների ընտրութեան միջոցով:

Իսկ դա նշանակում է, վոր անասնաբուծութեան սոցիալիստական վերակառուցումը, այսինքն՝ խորհրդային տնտեսությանը և կոլտնտեսային կաթնապրանքային ֆերմաների կազմակերպումը հնարավորութեամբ կտա հենց մոտիկ տարիներում, միևնույն կերպին հողամասից ստանալու համարյա յերկու անգամ ավելի կաթնամթերքներ և Յերկրամասը դարձնելու ԽՍՀՄ-ի արդյունաբերական կենտրոններին կաթնամթերքներ մատակարարող հզորագույն բազա:

Սակայն սրանից չի կարելի յեզրակացնել, վոր կոլտնտեսականների բոլոր անասունները պետք է անմիջապես համայնացվեն կոլտնտեսային ապրանքային ֆերմաներում: Համկ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն իր 1932 թվի մարտի 26-ի վորոշման մեջ ամենավճռական կերպով ընդգծեց, վոր միայն «կոլտնտեսությունների թեմայիններ կարող են թույլ տալ առանձին կոլտնտեսականների կովերի յեվ մանր անասունների պարտադիր համալցումը»: Նույն վորոշման մեջ նշվում է, վոր «կոլտնտեսության խնդիրը կայանում է նրանում, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական ունենա իր յեզր, իր կովը, մանր անասունը, թուռնը», իսկ այդ պատճառով առաջարկում է կուսակցական, խորհրդային և կոլտնտեսային բոլոր կազմակերպություններին՝ 1) վերջ տալ կոլտնտեսականների կովերի և մանր անասունների պարտադիր համայնացման, իսկ Կենտկոմի վորոշումները խախտողներին հանել կուսակցությունից, 2) կազմակերպել ոգնութեան և ոժանդակութեան կով և մանր անասուններ շունեցող կոլտնտեսականներին հորթեր գնելու և աճեցնելու՝ իրենց անձնական կարիքների համար»:

Կոլտնտեսային ֆերմաները հետագայում պետք է ընդարձակվեն և զարգանան միմիայն հորթեր աճեցնելու և անասուններ գնելու հաշվով:

Հատկացնելով յուրաքանչյուր կոլտնտեսականի ընտանիքին մեկական կով, ֆերմաներն ազատվում են կոլտնտեսականներին կաթնամթերքներ մատակարարելու անհրաժեշտութեանից և հնարավորութեամբ են օտանում ամբողջ ստացված մթերքների 80—85 տոկ. հանձնել պետութեանը և հանել շուկա: Այսպիսով ԿՍԾ-երը և կաթնային խորհրդային տնտեսությունները լինելու յեն շուկայի կաթնամթերքների հիմնական արտադրողները: Այդ պատճառով ԿՍԾ-երում աշխատանքի դժվարու-


յունից, ԿՍԾ-երում աշխատող կոլտնտեսականների սշխատել իմանալուց, նրանց ավելի արագ կերպով արտադրութեան տեխնիկային տիրանալուց է կախված յեվ յերկրի արդյունաբերված կենտնոցների բանվարների յեվ քաղաքի բնակչությանը կաթնապրանքների մատակարարումը: Դա պարտավորեցնում է ԿՍԾ-երում աշխատող յուրաքանչյուր կոլտնտեսականին հնարավորութեան չափով արագ կերպով ուսումնասիրել կաթնաարտադրության ինչպես տեխնիկական, այնպես էլ կազմակերպական կողմերը սոցիալիստական տնտեսության պայմաններում:

ԼԱՎԱՑՆԵՆԲ ՄԵՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Կաթնատնտեսութեան յեկամուտները կախված են նախ և առաջ ստացվող կաթից. վորքան շատ կաթ տան կովերը, այնքան էլ եժան է նստում նրանց կերակրելը: Բայց յեկամուտը կախված է նաև նրանից, թե կաթը վորքան է նստում իրեն՝ կոլտնտեսութեանը: Ինչքան թանկ լինի կովի ինամքը, այնքան էլ քիչ է նրանից ստացվող յեկամուտը: Պետք է կովը լինի այնպիսի պայմաններում, վոր քիչ ծախս պահանջվի յեվ ցուս կաթ ստացվի: Դրա համար կովին պետք է կերակրել կանոնավոր կերպով:

Կանոնավոր կերակրելու դեպքում կաթն եժան է նստում: Դա ապացուցված է բազմաթիվ տնտեսությունների վորձեքով: Ռայոններից մեկում գյուղացիները տալիս էին կովերին, որինակ, 16-ական կիլոգրամ խոտ, այսինքն՝ յերկու անգամ ավելի, քան թե պիտի տրվեր: Կովերն որեցոր պակասեցնում էին կաթը: Դյուրատնտեսի խորհրդով նույն այդ կովերին սկսեցին կերակրել կանոնավոր. տալիս էին նրանց վոչ միայն խոտ, այլ և զանազան կերեր: Իսկույն բարձրացավ կովերի քաշը և կաթի քանակը: Առաջ նրանք որական տալիս էին 7-ական կիլոգրամ կաթ, իսկ հետո տալիս էին 10-ական և նույն իսկ ավելի կիլոգրամ: Ճիշտ է, յուրաքանչյուր կովի կերի արժեքը հնչին չափով ավելացավ, բայց ավելացավ նաև յուրաքանչյուր կովի կաթի քանակը ավելի քան յերեք կիլոգրամով: Ահա թե ինչ կարևոր նշանակութեամբ ունի կովին կանոնավոր կերակրելը:

Մեր կովը պիտի դառնա կաթի ֆաբրիկ: Նա պիտի կրկնապատկի իր կաթի քանակը: Բայց այդ չի նշանակում, վոր պետք է կրկնապատկել կերի քանակը, այլ պետք է միայն քաշելավել կերը:



Յարսպայան տեսակի յեզ

ԻՆՉՊԵՍ ԲԱՐԵԼԱՎԵԼ ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԸ

Լավ հորթեր ստանալու և նրանց մեծացնելով խոշոր կաթնատու կովեր ունենալու համար, պետք է ընտրել ցեղային առողջ ցուլ (բուդա): Յեթե ցուլը ունի վորևե պակասություն, նրանից առաջ յեկած հորթն էլ լավը չի լինի: Մապատավոր մեջք, նեղ կուրծք, վատ սիրտ, թույլ թոքեր—այդ բոլորը կժառանգե և հորթը:

Կաթնացեղային ցուլի մարմնի առանձին մասերը պետք է լինեն կանոնավոր: Այդ նշանակում է՝ գլուխը լինելու յե փոքր, աչքերը՝ բարի, պարանոցը՝ կարծ, առանց կրծքից կախ ընկած մորթու, պարանոցի վրա ծալքեր, կուրծքը՝ լայն և խոր, մեջքն ուղիղ, վտանների զրվածքը՝ ուղիղ և լայն, գավաղը՝ լայն և լիքը, ամորձիքը՝ լավ զարգացած, բայց փոշ շատ կախ ընկած: Զուգավորման լավ հասակը՝ 2-ից 5 տարեկան:

Զուգավորումից առաջ անասնաբույժը տայում է գուլին: Հիվանդ ցուլին չի կարելի թողնել զուգավորման, մանավանդ թորախտավոր ցուլերին, նրանց բոլորովին չպետք է թողնել այդ նպատակների համար:

Կաթնատու լավ ցեղային կով ունենալու համար պետք է ընտրել առատ կաթ ավողներին: Այստեղ կարևոր է նայել կուրծքը: Կաթնատու կովի կուրծքը մեծ է, պտուկները լայն դասավորված: Լավ է, յեթե կուրծքն ունենում է հավելյալ պտուկներ: Փորի վրա կրծի մոտ գտնվող կաթնային յերկու յերակները պետք է լինեն հաստ և վոլորապտույտ:

Կաթնատու կովերի գլուխը թեթև է, փոշ մեծ յեղջյուրներով: Պարանոցը՝ նեղ, կուրծքը լայն և խորը: Կողերը նեղ են,

լայն արանքներով: Վտաները դասավորված են ուղիղ, լայն: Յեթե հետի վտարերը իրար մոտ են գտնվում, կովը հաճախ՝ քայլելիս սայթաքում է. դա շատ վտանգավոր է հղի կովի համար:

Կաթնատուների բազմացման ձևերը յերկուսն են. դրանցից մեկն այն է, յերբ տեղական տեսակի կովին զուգավորում են արտասահմանյան ցեղային ցլի հետ: Յեղային ցլին հառարակ կովի հետ զուգավորումից առաջացած հորթը կլինի կիսով չափ գոտայուն, այսինքն՝ կիսագնավացեղ: Յեթե կիսագնավացեղ կովին կրկին անգամ զուգավորել նույն տեսակի ցեղային ցլի հետ, հորթը կունենա արդեն $\frac{3}{4}$ լավ արյուն: Այսպիսով յուրաքանչյուր նոր սերունդ ունենալու յե ավելի ու



Լավ կաթնատու կովի կուրծք



խոլմագոդյան կով

ավելի շատ լավ արյուն: Վերջապես, չորրորդ սերունդը կլինի բոլորովին գոտայուն: Արտասահմանյան ցեղային անասունը շատ քնքուշ է. նա նույն իսկ լավ խնամքի պեպքում հաճախ հիվանդանում է, վորովհետև մեր սառնամանիքներն ու կերե-

բը չի տանում: Այդ պատճառով գուգավորումով ոգտվել կարելի չե միայն այն կուլտուրաներում, ուր անասունների համար կան լավ պայմաններ:

Բայց կարելի չե ազնվացնել անասուններին և առանց արտասահմանյան ցուլերի: Դրա համար պետք է միայն ընտրել կաթնատու մայրերից ծնված, տեղական լավ ցուլերի հետ: Դա բազմացնելու ավելի հեշտ ձևն է: Այդպես ելին բազմացվում ուկրաինական, դալմուսական, կիրգիզական, բարոսլավյան և սիբիրյան տափաստանային անասունները: Բացի դրանից, այս ձևով բազմացումը նրանով է լավ, վոր անասունը կազնվանա հարազատ, սովորական պայմաններում: Տեղական ցեղային անասուններին կարիք չկա ընտելանալու վոչ յեղանակին, վոչ էլ կերերին: Նրանց ծնունդն էլ լինում է ամուր և դիմացկուն: Բայց այդ ձևի անասունը շատ դանդաղ է ազնվանում:

Ավելի հարմար է ոգտվել յերկու ձևով էլ. նախ գուգավորել մի քան հասարակ կովեր ցեղային ցլի հետ, իսկ հետո առաջ յեկած արու և եզ հորթերին գուգավորել միմիանց հետ: Այդպես է առաջ յեկել մեր խոլմոզորյան անասունը: Նախ տեղական տեսակը գուգավորեցին հոլլանդականի հետ, իսկ հետո սկսեցին ազնվացնել տեղական ցուլերի միջոցով:



Հոլլանդական տեսակի կով—մի տարում 24 յեղ կես կազար լիտր կաք տվալ

ԿԱՆՈՆԱՎՈՐ ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄԸ ԱՌՈՂԶՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆՆ Ե

Ամրակազմ սերունդ ստանալու համար, պետք է իմանալ թե վոր հասակում պիտի կատարել գուգավորումը:



Շրտագործյան ցուլ

եզ հորթը հասնելով սեռային հասունության, ցուլց է տալիս գուգավորման ցանկություն:


Եզ հորթերի այդ ցանկությունն արտահայտվում է 8—12 ամսական հասակում: Գյուղում ութն ամսական եզ հորթերին հաճախ թողնում են ցուլերի մոտ: Այդ շատ վնասակար է և կովերի և սերնդի համար: Վաղ գուգավորումից կանգ է առնում կովի աճը: Նրա ծննդաբերությունը դժվարանում է, հաճախ բոլորովին չի կարողանում ծնել և ստիպված են լինում նրան մորթել: Ծնելու դեպքում էլ, ծնված հորթը լինում է թուլակազմ: Նրանից լավ կաթնատու կով կամ ամրակազմ, առողջ ցուլ չի ստացվի:

Մի տարեկանից պակաս արու հորթերին չի կարելի գուգավորել: Շատ մատղաշ արու հորթերը շուտով ուժասույառ են լինում և տալիս են թույլ սնունդ: Առաջին անգամ գուգավորման ամենալավ ժամանակը արու հորթերի համար՝ մեկ և կեսից մինչև յերկու տարեկան հասակն է, իսկ եզ հորթերի համար՝ մեկ և կեսից մինչև մեկ տարի 9 ամսական հասակը:


Զուգավորել պետք է բեղմնավորելու դեպքում:

Հաճախ լինում է «պատ» գուգավորություն, յերբ ցուլը գտնվում է նախրում: Բայց լինում է և «ձեռքի» գուգավորում, յերբ ցուլը բաց է թողնվում կովի մոտ բակում կամ գոմում:

Ազատ գուգավորումն անհարմար է. կաթն ստացվում է միաժամանակ գարնան և ամառը: Ավելի լավ է, յեթե կովը ծնի աշնանը, յերբ կաթն առհասարակ պակասում է: Բացի դրանից, նախրում լավ ցուլերի հետ լինում են և մատղաշ, թույլ ցուլեր: Նրանք գուգավորվում են կովերի հետ և վատ



Սիմենտայյան կով



Նվեդական կով

ծնունդ են տալիս: Ուժեղ ցուլը նախընտրվում է զուգավորվում է շատ կովերի հետ և ուժասպառ դառնում: Այդ պատճառով պետք է կատարել ձեռքի զուգավորում:

Ահա ձեռքի զուգավորման ընդհանուր կանոնները.

Զուգավորումը պետք է կատարել հանգիստ անկողնում: Յուրի մոտեցնում են քթածակերից անցկացրած ողակից բռնած, վորովհետև այդ դեպքում նա ավելի խոնարհ է լինում և այդպիսի դրուժյամբ հեշտ է նրա հետ վարվել: Յուրին թողնում են կովի մոտ գգուշուժյամբ, վորպեսզի նա չջարդե թե իր և թե կովի վսակորները:

Բարձրահասակ կովերին պետք է կանգնեցնել ցած տեղում և կապել սյունին յեղջուրներին անցկացրած թուղով: Զուգավորումից հետո կովին պետք է հանդարտությամբ հեռացնել:

Յուրին պետք է բաց թողնել որական միայն մի կովի մոտ: Շարաքը յեղիս ու ցուլին հանգիստ են թողնում: Յուրին պետք է պահել մաքուր և զուգավորել հիվանդ կովերի հետ: Զուգավորման ժամանակամիջոցում շատ ոգտակար է ցեղային ցուլին որական տալ 5 կիլոգրամ վարսակ:

Կովերի վոր տեսակին է ամենաշատ կաթ տվողը: Վոր ցուլի հետ պիտի զուգավորել հասարակ կովը՝ լավ սերունդ ստանալու համար:

Մեր յերկրամասի համար լավագույնն են համարվում գերմանական կարմիր կովերը: 570 կիլոգրամ միջին քաշ ունեցող այդպիսի կովը տալիս է տարեկան մոտ չորս հազար կիլոգրամ կաթ: Արտասահմանյան տեսակի կովերից հայտնի յեն շորագործյան, սիմենտայյան և շվեդական կովերը, վորոնց կարելի է մեզ մոտ բազմացնել: Նրանք խոշոր են, մաստու-

և կաթնատու: Բայց, վորովհետև նրանք ապրել են ուրիշ յերկրներում, այդ պատճառով վատ են գիմանում մեր կյանքի պայմաններին:

Քաղաքից հեռու գտնվող վայրերում նպատակահարմար է կաթից յուղ պատրաստել:

Բայց և այնպես կովերի վոր տեսակն էլ պահելու չլինենք, պետք է հիշենք, վոր կաթնատնտեսության հաջողությունը կախված է անասուններին կանոնավոր պահելուց:

ԻՆՉՊԵՍ ՊԱՅԵԼ ԿՈՎԵՐԻՆ

Լավ կաթնատու կովին կարելի է փչացնել, յեթե նրան վատ պահենք: Կովերին չփչացնելու համար պետք է իմանալ թե անասուններն ի՞նչ պայմաններում են լավ ապրում: Զբաւոր և միջակ անհատական տնտեսություններ չեն կարող կանոնավոր կերպով կովը պահել: Իս մատչելի է միայն խոշոր կոլեկտիվ տնտեսությանը:

Յուրաքանչյուր կենդանու կյանքի համար մեծ նշանակություն ունի սափուր ողոր: Խեղդուկ, ծանր ոգում շատ փոշի է լինում և մանր եյակներ, վորոնք կոչվում են մանրեներ: Այդ մանրեներից առաջ են գալիս գանազան հիվանդություններ: Շնչառության ժամանակ կենդանին արտաշնչում

ե անխաթմութիւնս կոչվող գաղը, վորը վնասակար գաղ ե: Այդ պատճառով նեղվածք գոմում շատ անխաթմութիւնս ե լինում: Անխաթմութիւնս աստիճանաբար թունալորում ե կովերին, նրանք թուլանում են, դառնում են դանդաղաշարժ, հեշտութեամբ հիվանդանում են: Նրանց կաթը պակասում ե: Խեղդուկ, կեղտոտ գոմում հորթերը լավ չեն մեծանում:

Անխաթմութեան առաջանում ե նաև նեխվածքներէ: Ուրեմն գոմում աղբը պահելը վնասակար ե: Աղբը պետք ե հավաքել ամեն օր:

Խոնավ ողում անասունները հաճախ հիվանդանում են: Գոմը վորքան շոգ և խոնավ լինի, այնքան վատ ե կովերի համար: Բայց չափազանց չոր ողումն ել փոշի յե լինում: Ուրեմն սղը պետք ե ունենա չափավոր տաքութիւն և չորութիւն:

Ողում գտնվում են շատ հիվանդութիւնների միկրոօրներ: Անասունն ողի միջոցով կարող ե վարակվել ժանդախտով, ծաղիկով, դաբաղով, թոքախտով և խլացավով: Այս բոլոր հիվանդութիւններով հիվանդանում են թե մարդիկ և թե անասունները: Այս պատճառով հարկավոր ե հետևել, վոր գոմում սղը միշտ մաքուր լինի:

Կովերի գոմում պետք ե լավ ոգափոխութիւն կատարել: Դրա համար գոմում շինում են մի քանի փայտյա ոգաքարշ խողովակներ—մի քանի տախտակներից: Տախտակների մեջ դնում են խավաքարտ կամ թաղիք, վորպեսզի փոփոխակի յեղանակի դեպքում խողովակները շատ արագ չտաքանան կամ չսառչեն:

Ավելի լավ ե խողովակներից յուրաքանչյուրը ներքին միջնորմներով բաժանել չորս առանձին խողովակների: Սրանցից յերկուսը պիտի լինեն յերկար, յերկուսը—կարճ: Խողովակների մի մասով մաքուր սղը կմտնի գոմ, իսկ մյուս մասով փչացած սղը դուրս կգնա:

Գոմի պատերը պետք ե լինեն ամուր, չոր և լավ պահեն տաքութիւնը: Սովորաբար պատերը լինում են աղյուսից, փայտից կամ կավածեփ: Պատերը պետք ե սպիտակացնել կրով: Այդպիսով գոմում թե տաք կլինի և թե մաքուր: Պատերը պետք ե սպիտակացնել տարեկան յերկու անգամ—գարնանը և աշնանը:

Առաստաղը պետք ե շինվի այնպես, վոր գոմի գոլորշիացումները չանցնեն տանիքը: Տանիքի վրա սովորաբար պահում են խոտ և ուրիշ կեր, վորոնք կարող են փչանալ գոլորշիացումից: Բացի դրանից, յեթե առաստաղը խորտուկ ե, վե-

րեվից կարող ե փոշի թափվել: Առաստաղի մեջ չպետք ե անցքեր շինել՝ խոտը ուղղակի վերևից թափելու համար: Խոտը պետք ե իջեցնել փայտյա խողովակներով, վորոնք պետք ե անցկացվեն տանիքից դեպի սրահը կամ նախասենյակը:

Չափազանց բարակ, փայտյա պատերն ու առաստաղները կարող են խոնավանալ: Դրանից խուսափելու համար պատերը պետք ե տախտակել, իսկ առաստաղը ծածկել կավի շերտով, կամ անել կրկնակի:

Գոմի կողմը չպիտի ծածկված լինի: Ամենից լավն ե կղմինդրե կամ յերկաթե կտուրը՝ տակից տախտակներ խփած:

Հատակը պետք ե շինվի այնպես, վոր մեզ չծծի: Նա պետք ե լինի անհարթ, փափուկ, տաք և ամուր: Ամենամուր հատակը բետոնից ե—խիճից, ավազից ու ցեմենտից: Սակայն այսպիսի հատակը խիստ հարթ ե, պող և կոշտ: Նա պետք ե ծածկվի շարժական, փայտյա վահաններով: Լավ ե ասֆալտե հատակը, բայց նրա վրա պետք ե ավազ փռել, վորպեսզի կովերը չսայթաքեն: Փայտյա հատակն ավելի եժան ե, բայց վատ:

Կավե և հողե հատակներն անպետք են: Նրանք ծծում են հեղուկ աղտեղութիւնները, իսկ փայտյա հատակը փտում ե:

Հատակը պիտի շինել մի փոքր թեք, մեզի համար հատուկ անցքով:

Շենքն անպայման պետք ե լուսավոր լինի: Առանց լույսի ամեն մի անասուն կքայքայվի: Լույսը զվարթացնում ե կովին, վոչնչացնում ե վարակը և ավելացնում ե կովերի կաթը: Գոմի լուսամուտները պետք ե մեծ շինել, ինչպես տների լուսամուտները: Մութ գոմում պետք ե պահել միայն այն անասուններին, վորոնք չաղացվում են մտրթելու համար:

Կովերը պետք ե տեղավորվեն գլուխները դեպի պատը: Մտուրքի և պատի մեջ պետք ե անցք լինի, այնպես, վոր կեր տալը հարմար լինի: Անասունները կարող են տեղավորվել իրար կողքի, աջ և ձախ պատերի յերկարութեամբ: Նրանց մեջտեղ պետք ե լայն տարածութիւն լինի՝ աղբը հավաքելու համար:


Կովերի կանգնելու տեղերը և սրանց միջև անցքերը պետք ե լինեն հետեյալ չափով.—

Անցքի լայնութիւնը—70 սանտիմետր:

Մտուրքի լայնութիւնը—1 մետր:

Կավասեղի յերկարութիւնը—2 մետր:

Կովասեղի լայնությունը—1 յեվ կես մետր:
Աղբի անցքի լայնությունը—1 յեվ կես մետր:



Մտուրք յերկու կովի համար: Պակասում է միայն աչ կորմի միջապատը՝ յերկու առխտակից

Կովատեղի բարձրությունը ներսից պիտի լինի մոտ 3 մետր: Մտուրքները պիտի լինեն հարթ, լայն, մաքրելու համար հարմար, ամուր և չպիտի ունենան սուր անկյուններ, վորովհետև հակառակ դեպքում կովերը կղիպչեն այդ սուր անկյուններին ու կվնասվեն: Ամենից հարմար են եմալի, չուգունի և ցեմենտի մտուրքները: Փայտյա մտուրքները դիմացկուն չեն, հեշտությամբ են փտում:

Նկարում ցույց է տրված լավ մտուրքի կառուցվածքը: Նա բաղկացած է կերասեղանից, ջրի գուշից և վանդակից: Վանդակը չի թողնում, վոր կովը վոտներով կանգնի մտուրքին և կերը գետին թափի:

Կերասեղանը գետնից բարձր պիտի լինի 45 սանսիմ:

Լայնությունը—54 սանսիմ:

Գուշի լայնությունը—32 սանս.

Խորությունը—18 սանս.

Վանդակի բարձրությունը հասակից—մեկ ու կես մետր:

Նրա լայնությունը 1 կովի համար—1 մետր:

Լավ է, յեթե գոմի կողքին կա տեղ, վորտեղ կարելի յե կովերին տանել զբոսանքի համար, յերբ նրանք չեն արածում: Ամենից լավ է կովերին պահել մաքուր ողում, իսկ գոմերում պահել միայն վատ և ցուրտ յեղանակին: Նույնիսկ ձմեռը

պետք է նրանց դուրս բերել մի քանի ժամով և կեր տալ մաքուր ողում:

Կովերին պետք է մանրակրկիտ խնամք տանել: Հարկավոր է որական յերկու անգամ փոխել նրանց սակի փովածքը: Այդ փովածքը չպիտի բորբոսնած ու փտած լինի: Պետք է հետևել, վոր փովածքի մեջ չլինեն թունավոր խոտեր: Հին փրվածքը պետք է անմիջապես գցել աղբի մեջ: Մտուրքները պետք է մաքուր պահել, լվալ սափ ջրով: Կովերին ամեն որ պետք է մաքրել խողանակով: Տաք յեղանակին հարկավոր է կովերին լողացնել:

Առանձնապես պիտի հետևել կուրծին (ստինքներին): Կուրծը հաճախ պիտի լվալ սապոնով, վորպեսզի կեղտից չբուրբովի:

Կթելուց առաջ կուրծը պիտի լվալ ջրով և սրբել մաքուր սրբիչով: Կթելու ժամանակ կթողի ձեռները, ամանը, շենքը պետք է մաքուր լինեն:

Պետք է հետևել կովերի առողջության և հաճախակի կանչել անասնաբույժին: Հիվանդ կովերին անմիջապես պիտի առանձնացնել: Հատկապես զգուշ պիտի լինել տուբերկուլյոզից: Վերջինս կաթի միջոցով հեշտությամբ անցնում է հորթերին ու մարդկանց:

ԻՆՉՈՎ ԿԵՐԱԿՐԵԼ ԿՈՎԵՐԻՆ

Թվում է, թե անասուններին կերակրելը դատարկ բան է.—մտուրքի մեջ խոտ կամ դարման լցրելը—պրծավ գնաց: Բայց իսկապես այդ այնքան էլ հասարակ բան չէ: Անասուններին պետք է կերակրել հմուտ կերպով, այնպես, ինչպես խորհուրդ են տալիս գյուղատնտեսները:

Ամենից առաջ պետք է գիտենալ, թե ինչ տեսակ կերեր են լինում: Կան չոր, կանաչ, ուժեղ, հյութալի կերեր:

Չոր կամ կոշտ կերերը—գա ծղոտը, հարդը, մզկղը, և խոտն է:

Կանաչ կերը—զանազան կանաչ խոտերն են:

Ուժեղ կերերը—քուսպ, թեփ, հացահատիկ:

Հյութալի կերերը—արմատապտուղներ, ձակնդեղ, գազար, կարտոֆիլ և այլն:

Այս բոլոր կերերը տարբեր են անգարարության տեսակետից: Հարկավոր է գիտենալ թե յերբ և ինչքան, ինչ տեսակ կեր կարելի յե տալ կովերին:

Ամենից քիչ սննդարարը կոշտ կերերն են: Բայց նրանց պետք է անպայման տալ անասուններին և այն ել որական 3—5 կիլոգրամից վոչ պակաս: Միայն ամառը, յեթե բավականաչափ կանաչ խոտ կա, կարելի յե չոր կեր չտալ: Միայն կոշտ կերով շատ կաթ չես ստանա: Կովը ուտում է որական վոչ պակաս քան 19 կիլոգրամ խոտ և տալիս է միայն 8 կիլոգրամ կաթ: Յեթե կովին տրվի նաև ուժեղ կեր, կարելի յե ստանալ մինչև 25 կիլոգրամ կաթ:

Ամենալավ խոտը ծաղկած ժամանակ հնձած աովույտն է, այնուհետև վիկը, ծաղկելուց առաջ հնձած: Ապա գալիս են ջրովի մարգագետինների խոտը, ցանովի խոտերը— դաշտային ֆլեռնը, փեստուկը, ունդը, հասարակ սեզը և վայրի սիսեռը: Անջրդի մարգագետնի խոտը վատ է: Ավելի վատ է ճահճային խոտը: Նրանից կովը փորճարինք է ստանում և կաթը փչանում է:

Կերի ծղոտներից ամենալավն է վարսակի և գարու ծղոտը: Հաճարի ծղոտը պակաս սնդարար է: Սա կարելի յե տալ միայն կերի սակավության դեպքում: Ծղոտը պետք է խաշել, կտրատել, աղել կամ թեփ խառնել:

Գարու մղեղ բոլորովին չի կարելի տալ, վորովհետև փշոտ է: Հաճարի մղեղը պետք է խաշել, հետո տալ: Վարսակի մղեղը կարելի յե տալ նաև առանց խաշելու:

Լավ կեր է աովույտի և կտավատի մղեղը: Մնացած բոլոր մղեղները կերի համար անպետք են:

Կանաչ կերերից լավ է կանաչ աովույտը: Սրանից կարելի յե տալ ամեն սնդամ 20 կիլոգրամից վոչ ավելի, հակառակ դեպքում կովի փորը կուռչի և փորճարինք կառաջանա, իսկ ծանրած կովերը նույնիսկ կարող են վիժել: Եվեղական սպիտակ աովույտը կարմիր աովույտից ավելի սննդարար է և նրանից փորը չի ուռչում: Կերի համար լավ է կապույտ աովույտը, բայց սրանից շատ չի կարելի տալ—կաթը դառն կըլինի:

Կանաչ յեգիպտացորենը, մանավանդ յերը սիրոսացված և լավագույն կեր է համարվում:

Պետք է, հետևել, վոր կերի մեջ թունավոր խոտեր չլինեն: Իրանք շատ են: Մի քանիսը կարող են թունավորել անասուններին, մի քանիսներն ել առաջացնում են կաթվածներ, փորճարինք և այլ հիվանդություններ:

Թունավոր խոտերը հետևյալներն են.— ձիաձետը, մոլեխինտը, յեղեբորոսը, վորոմը, մանանխը, խաշխաշը, ծխախոտը,

կաղանջանը, ավելուկը, պիսակը, գյուլուլը, շնկարոսը, ընձախոտը կամ գորտնուկը, ցինդը (վաղինակ), ճահճային մորմը, բանդը կամ շնախաղողը, վշախնձորը, մատնոցակը, տերեփուկը, կմշտրուկը, զինին և այլն:

Ահա թե ինչու պետք է բարելավել արեաատեղերն ու մարգագետինները, ջրելով և պոկտելով վնասակար խոտերը: Ավելի լավ է վատ մարգագետինը վարել և այնտեղ ցանել լավ խոտ: Ոգտակար է նաև խոտ ցանել արտերում: Բացի նրանից, վոր այդպիսով կբարձրանա հացաբույսերի բերքը, ստացված խոտն ել սննդարար կլինի:

Վերջին ժամանակներս անասուններին սկսել են տալ թըթու դրած կեր, այսինքն սիլոս: Իրա համար աշտարակներ են շինում կամ փոսեր փորում և այնտեղ լցնում արմատապտուղներ, մանրած խոտ և ցողուններ: Փոսերը ծածկում են, վորպեսզի այնտեղ ող և ջուր չանցնի: Ստացվում է շատ սննդարար և համեղ կեր, վորից կաթը բավական ավելանում է:

Հյուսթալի կերերից ամենալավը կեթի ճակնդեղն է: Նրանից կարելի յե տալ որական մինչև 30 կիլոգրամ: Լավ կեր է նաև գազարը: Կարտոֆիլը պետք է տրվի հում, ջարդված, թըրջված և որական 12 կիլոգրամից վոչ ավելի, հակառակ դեպքում կովը փորճարինք կստանա: Այնուհետև կարելի յե տալ ռադգամ և գոնգեղ: Հյուսիսային յերկրներում անասուններին կերակրում են նաև յերալմասիով:

Ուժեղ կեր պետք է տալ որական մեկ կիլոգրամից վոչ պակաս, բայց և 6 կիլոգրամից վոչ ավելի՝ յուրաքանչյուր զըլուխ անասնին: Այս կերերը պետք է իրան խառնել: Որինակ հաճարի այլուրը պետք է տալ թեփի և քուսպի հետ:

Հացահատիկներ պետք է տալ միայն աղալուց հետո: Ամենալավ քուսպն ստացվում է արևածաղկից: Կտավատի քուսպը թեև սննդարար է, բայց նրանից կաթը դառնանում է, իսկ յուղը ձարավում: Վորպես կեր, լավ է վարսակի, յեգիպտացորենի, գարու և հաճարի այլուրը: Սիսեռն ու լոբին ավելի վատ են: Կերի համար շատ լավ է ցորենի թեփը, բայց սրանից կարելի յե տալ վոչ ավելի, քան 4 կիլոգրամ: Յեթե ավելի շատ տրվի, կովը փորճարինք կստանա:

ՎԱՆՈՆԱՎՈՐԵՆԲ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Կովին պետք է տալ վոչ թե աչքի չափով, այլ կշեռքով: 12 կիլոգրամ կաթ տվող կովին սովորականից ավելի շատ կեր պետի տալ: Իսկ այն կովը, վորը 1 կիլոգրամ կաթ է տալիս,

քիչ քանակով ել կեր ե պահանջում: Մի քանիսներն այսպես են մտածում.— «Ինչքան շատ կեր տամ կովին, այնքան շատ կաթ կտանամ»: Այդ ճիշտ չէ: Յեթե չափից շատ կեր տրվի, կովն ել չափից շատ կուտի և կհիվանդանա: Իհարկե դրանից վոչ մի ոգուտ չի ստացվի: Հարկավոր ե գիտենալ թե յուրաքանչյուր կեր վորչափ ե սննդարար, այն ժամանակ պարզ կլինի, թե ինչ չափով և ինչ կեր պիտի տալ և ինչով փոխարինել այս կամ այն կերը: Կարճ ասած՝ հարկավոր ե գիտենալ կեր տալու չափը:

Կերի չափը վորոշելու համար սահմանված ե այսպես կոչված՝ կերի միավորը: Այդ միավորը վարսակի 1 կիլոգրամն ե: Գիտենալով կերի միավորը, կարելի յե համեմատել զանազան կերերի սննդարարությունը: Որինակ, 1 կիլոգրամ ալյուրն իր սննդարարությամբ հավասար ե 3 կիլոգրամ մարգագետնի խոտին կամ 4 կիլոգրամ գարնանացանի ծղոտին: 1 կիլոգրամ ալյուրի, 3 կիլոգրամ մարգագետնի խոտի և 4 կիլոգրամ գարնանացանի ծղոտի սննդարարությունը կհավասարվի 1 կերի միավորին, այսինքն 1 կիլոգրամ վարսակին:

1 կիլոգրամ վարսակը նոյնչափ սննդարար ե, ինչպես և 1 կիլոգրամ ալյուրը, կամ 1 կիլոգրամ թեփը, կամ 750 գրամ հացը, կամ թե նույնքան քուսպը (կտավատի և արևածաղկի): Մեկ կիլոգրամ վարսակը նույնպես սննդարար ե, ինչպես 8 կիլոգրամ մարգագետնի կամ վիկի խոտը:

Մեկ կիլոգրամ վարսակը նույնպես սննդարար ե, ինչպես և 2 և կես կիլոգրամ առվույտի խոտը, կամ 4 կիլոգրամ ճահին խոտը, կամ 5 կիլոգրամ վարսակի հարդը, կամ 4 կիլոգրամ վարսակի մղեղը, կամ 5 կիլոգրամ հաճարի հարդը:


Մեկ կիլոգրամ վարսակը նույնպես սննդարար ե, ինչպես և 6 կիլոգրամ կարտոֆիլը, կամ 8 կիլոգրամ գազարը, կամ 10 կիլոգրամ ճակնդեղը, կամ 12 կիլոգրամ շախգամը:

Մեկ կիլոգրամ վարսակը նույնպես սննդարար ե, ինչպես 8 կիլոգրամ կանաչ առվույտը, կամ 10 կիլոգրամ կանաչ վիկան վարսակի հետ խառնած, կամ 14 կիլոգրամ մարգագետնի խոտը, կամ 12 կիլոգրամ դաշտային խոտը, կամ 11 կիլոգրամ կաղամբի տերևները, կամ 15 կիլոգրամ շաղգամի տերևները:

Կովերին չի կարելի տալ միայն վորևե կեր: Կերը պետք ե բաղկացած լինի մի քանի տեսակներից: Միշտ չի կարելի կերը փոխարինել մի ուրիշ կերով: Առանձնապես շատ զգուշ պիտի լինել ուժեղ կերերը կոշտ կերերով փոխարինելիս: Հաշված ե

թե որական ինչքան կեր կարելի յե տալ միջակ կովին, վոր կշռում ե 300—450 կիլոգրամ: Ահա այդպիսի կովի կերը— վարսակ կամ գարու հարդ կարելի յե տալ վոչ ավելի քան որական 4 կիլոգրամ:

Հաճարի հարդ	3	կիլոգրամից	վոչ ավելի
Վարսակի մղեղ	3	»	»
Մարգագետնի խոտ	8	»	»
Առվույտի կամ վիկի խոտ	8	»	»
Կանաչ խոտ կամ կանաչ վիկ	40	»	»
Առվույտի կանաչ խոտ	25	»	»
Ճակնդեղ կամ շաղգամ	32	»	»
Կարտոֆիլ	8	»	»
Քուսպ	8	»	»
Թեփ կամ գարու ալյուր	4	»	»
Հաճարի, վարսակի կամ յե- գիպտացորենի ալյուր	3	»	»



Կովին չափում են նրա կշիռն իմանալու համար

Վորպեսզի հաշվել, թե վո՞ր կովին, ինչքան կեր պիտի տալ որեկան, պետք ե իստանալ կովի կամ նրա տված կաթի կշիռը: Կովի կշիռն իմանալը դժվար չէ: Դրա համար նրան պիտի չափել պոչից մինչև վիզը, (տես վերևի նկարը), ապա նրա լայնությունը: Ստացված թվերը պետք ե բազմապատկել ու բաժանել 50-ի վրա: Որինակ, յեթե կովի իրանի

լերկարությունը 140 սանտիմետր եւ, լայնությունը 170 սանտիմետր, ապա 140-ը պետք է բազմապատկել 170-ի վրա: Կտտացվի 23 հազար 800: Բաժանենք այս թիվը 50-ի վրա: Կտտանանք 476: Հենց այդ թիվն էլ ցույց է տալիս կովի կշիռը: Ուրեմն կովը կշռում է 476 կիլոգրամ:

Հասակավոր կովին որեկան պիտի տալ մոտավորապես 2 և կես կիլոգրամ կոշտ կեր՝ նրա կշռի յուրաքանչյուր 100 կիլոգրամին: Յեթե կովը կշռում է 400 կիլոգրամ, նրան որեկան հարկավոր կլինի տալ 10 կիլոգրամ կոշտ կեր: Սակայն մենք արդեն գիտենք, վեր մարգագետնի խոտը 8 կիլոգրամից ավելի չի կարելի տալ: Ուրեմն պետք է ավելացնենք 2 կիլոգրամ վարսակի հարզ կամ մղեղ: Յեթե կովն ամուլ է և կաթ չի տալիս, ուրեմն այդ կերը բավական է: Իսկ յեթե կովը կթվում է, պետք է ավելացնել նաև ուժեղ կերեր:

Վորպեսզի կովը 3 կիլոգրամ կաթ տա, պետք է ստանա մեկ կիլոգրամ լրացուցիչ ուժեղ կեր: Ուրիշ խոտքով, յուրաքանչյուր 3 կիլոգրամ կաթին պետք է ավելացնել մեկ կերի միավորի չափ ուժեղ կեր: Յեթե կովն որեկան տալիս է 15 կիլոգրամ կաթ, ուրեմն որվա ընթացքում նրան պետք է տալ ևս 5 կերի միավորի չափ ուժեղ կեր:

Վերջնենք յերկու կերի միավոր թեփ, 1 կերի միավոր կտավատի քուսպ և 2 կերի միավոր ճակնդեղ: Իսկ կլինի՝ 2 կիլոգրամ թեփ, 750 գրամ քուսպ և 20 կիլոգրամ ճակնդեղ: Ահա թե որեկան ինչքան կեր պիտի ավելացնել այն կովին, վորը 15 կիլոգրամ կաթ է տալիս:

Որեկան կերի բաղադրությունը կարելի չէ փոխել: Կովին պետք է կերակրել նրանով, ինչ վոր կա ձեռքի տակ, ինչ վոր եժան է: Սակայն ամեն անգամ կեր տալիս պետք է վերցնել թե ուժեղ, թե կոշտ յե՛վ թե կանաչ կերեր: Չի կարելի տալ նաև միայն մի վորևե ուժեղ կեր: Հարկավոր է տալ հավասար քանակությամբ քուսպի, թեփի և ալյուրի խառնուրդ:

Յեթե մենք գեռ չգիտենք, թե կովի համար ինչքան կեր պիտի ավելացնել, ապա պետք է ավելացնենք 500 գրամ և հետևել կաթի քանակության: Յեթե կաթը մնա միևնույն քանակությամբ, ուրեմն կերը քիչ է յեղել և պիտք է ավելացնել: Յեթե կաթն ավելացրել է, պետք է կերը դարձյալ ավելացնել: Այսպիսով կարելի չէ մեծ քանակությամբ կաթ ստանալ:

Լավ կաթնատու կովին, ծնելուց հետո առաջին 3—5 ամսում պետք է տալ ուժեղ կերեր կամ արմատապտուղներ: Նոր կթվող կովին հարզ ու խոտ պետք է տալ ամբողջ կերի կե-

սից վոչ ավելի: Յերբ կովն սկսի պակասեցնել կաթը, կարելի չէ պակասեցնել կերը—յուրաքանչյուր պակասած 3 կիլոգրամ կաթին պակասեցնել մեկ կիլոգրամ ուժեղ կեր:

Ամուլ կովին ավելի լավ է տալ կոշտ կեր, մի քիչ ուժեղ կեր խառնած:

Կերը ավելի լավ է տալ վորոշ կարգով,—սկզբում ուժեղ կերերը, արմատապտուղները և վերջում—կոշտ կերերը: Վորպեսզի ուտելիս կովի բերանում թուր առաջանա, վորը նպաստում է մարսողության՝ պետք է ալյուրը կամ թեփը խառնել հարզի մղեղի կամ հենց հարզի հետ: Վերջինս պետք է լինի թաց և աղած: Որական պետք է տալ 6-ից մինչև 16 կիլոգրամ կոշտ կերեր, արմատապտուղներ—30 կիլոգրամից վոչ ավելի, ուժեղ կեր—6 կիլոգրամ:

Կերն անպայման թարմ պիտի լինի: Առողջ կովի համար խիստ փաստակար է բորբոսնած կամ մզլած կերը: Առանձնապես փաստակար են այն կերերը, վորոնք վարակված են ժանգով: Կովին չի կարելի կերակրել ծլած արմատապտուղներով: Չյունով ծածկված և մրսած կերից կովերը ունենում են աղիքների խիթ, փորհարինք և վիժում:

Կերը հարկավոր է տալ որեկան 3 անգամ,—առավոտը, կեսօրին և յերեկոյան: Յեթե կան ուժեղ և հյութալի կերեր, կարելի չէ կեր տալ 2 անգամ—առավոտ և յերեկո: Կերատվությունները միջև ժամանակը հավասար պետք է լինի: Յեթե կովերը յերկար սպասել են կերին, սկսում են ուտել շտապ, վրաս են ծամում և չափից դուրս են ուտում:

Կոշտ կերերն ավելի համեղ կլինեն, յեթե կարատվեն, խաշվեն և յեփ տրվեն: Սակայն խաշած կերը պիտի պատրաստել հենց ուտելուց առաջ, հակառակ դեպքում նրանք կարող են փչանալ:

Շատ ոգտակար է կովին արտատեղը տանել: Մաքուր տեղում կովերն ավելի լավ են ուտում, ավելի հեշտ են ընտելանում յեղանակի փոփոխություններին, ուտտի և սակավ են հիվանդանում: Մաքուր ողում կովերն ավելի շատ կաթ են տալիս, իսկ հորթերն ավելի լավ են մեծանում:

Սակայն կովը գոմում կերակրելուց արտատեղը փոխադրել հարկավոր է աստիճանաբար: Չի կարելի արածացնել պող-ցողի կամ յեղյամի ժամանակ: Այդ փաստակար է կովերի, մանավանդ հզի կովերի համար:

Չի կարելի կովերին արածացնել անտառային և ճահճային արտատեղերում: Անտառում շատ տեղեր կան, վորոնք

կարող են կովին վարակել «արյունոտ մեզ» հիվանդութեամբ: Ճահիճներում կան շատ զանազան բակտերիաներ և ճիճուներ: Արոտատեղերը բարելավելու և մեծացնելու համար հարկավոր է չորացնել ճահիճները:

Կովին պետք է որակյան յերկու անգամից վոչ պակաս տալ մաքուր ջուր: Զուրը գոմում պետք է լինի շարունակ կովը վորքան շատ խմի, այնքան լավ է:

ՀՂԻ ԿՈՎԻ ԽՆԱՄԲԸ

Կովի հղիութիւնը շարունակվում է 9 ամիս: Ծնելուց մոտ 6 շաբաթ առաջ կովին պետք է «ցամաքեցնել», այսինքն այլևս չկթել: Կուրծը պետք է հանգստանա, հակառակ դեպքում հետևյալ տարի կովը յերկու անգամ կպակասեցնի կաթը:

Կովին պետք է ցամաքեցնել աստիճանաբար,—սկզբում կթել որեկան մեկ անգամ, այնուհետև որ ընդ մեջ, հետո յերկու որը մեկ անգամ, հետո յեկ այլևս չկթել:

Այդ ժամանակ կովը սնում է ապագա հորթին: Յեթե կովը վատ կերակրվի, նա կթուլանա և կծնի թույլ, վատ հորթ: Ծնելուց 2—3 ամիս առաջ կովի կերը պետք է ավելացնել մեկ կիլոգրամով, իսկ ծնելու նախորդակին—մինչև 2—3 կիլոգրամով: Չկթվող կովին պետք է կերակրել նույնպես, ինչպես և կթվողին: Այդ դեպքում ծնելուց հետո նա շատ կաթ կտա: Իսկ յեթե կովը նիհարում է մինչև ծնելը, ապա ծնելուց հետո կերը նրան կազդուրում է և վոչ թե կաթն ավելացնում:

Պետք է հետևել, վորպեսզի հղի կովը չվաղվզի: Պետք է նրան պաշտպանել ընկնելուց, վրասովելուց, սառը ջրից, հաճախակի նրա տակ փռել փափուկ և չոր փուփածք: Յեթե կովի փորը կամ կուրծքը ուռչի, ապա հարկավոր է կես ժամ նրան ման ածել: Յեթե ծնելուց առաջ կովը կաթ տա, պետք է կթել որական 2—3անգամ: Հղի կովին չի կարելի տեղավորել գոմի թեք հատակ ունեցող տեղում:

Կովի ծնելու ժամանակ նրան անպայման պիտի ոգնել: Հետո պետք է սպասել, մինչև վեր դուրս գա ծինը: Յեթե յերկրորդ կամ յերրորդ որը ծինը դուրս չեկավ, պետք է շտապ կերպով կանչել անասունների բժիշկին—անասնաբու- ժին: Առանց անասնաբու- ժի չի կարելի ծինը դուրս քաշել: Դրանից կարող է արյան վարակում առաջ գալ և կովը կարող է սատկել:

Պետք է սրբել ներածին հորթի բերանի ու քթի լորձունքը, հետո նրա ամբողջ մարմինը սրբել խոտով: Պետք է թողնել, վոր մայրը լիզի հորթուկին: Վերջինիս վրա աղ չի կարելի ցանել—դա վրասակար է:

Ծնելուց հետո կովին պետք է տաք պահել: Նրան պետք է պաշտպանել միջանցիկ քամիներից և միայն թեթև կեր տալ: Ծնելուց հետո առաջին շաբաթում ամենից լավ է տալ տաք ալրախառն խմելիք և մի քիչ խոտ: Հետո կարելի յե հետզհետե տալ սովորական կեր: Յերկրորդ ու յերրորդ շաբաթը պետք է տալ ամենալավ կերը: 5 ամսից հետո կերի քանակը կարելի յե պակասեցնել:

ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄԲԸ

Կաթնատու անասունների քանակութիւնն ավելացնելու միակ ճիշտ ճանապարհը այն է, վոր չպետք է մորթել հորթերը, այլ կանոնավոր մեծացնել նրանց:

Նախանցյալ տարի մի քանի մենատնտես գյուղացիներ կուրսնտեսութիւն մտնելուց առաջ մորթում էյին անասունները, մանավանդ հորթերը: Նրանց այդ բանին դրդում էյին կուլակները, վորոնք ուզում էյին վիժեցնել մեր սոցիալիստական անասնաբու- ժութիւնը: Խորհրդային կառավարութիւնը հրատարակեց մի որենք, վորն արգելում էր մատղաշ անասունների (հորթերի) մորթը:

Մեծացնելով հորթերին, պետք է հիշել հետևյալը.—վատ հորթը լավ կով չի դառնա: Յեվ վորպեսզի հորթը լավ ու առողջ լինի, նրան պետք է կանոնավոր կերակրել ու պահել: Իսկ մեզանում հորթերին աճեցնում են վատ, հին ձևով: Նրանց պահում են կեղտոտութեան մեջ, խոնավ ու ցուրտ հորթանոցներում: Անարատ կաթ քիչ են տալիս նրանց: Ահա թե ինչու մեզանում շատ հորթեր փչանում են, շատերն էլ լինում են վտիտ ու հիվանդ:

Միայն կուրեկտիվ, խոշոր տնտեսութիւնը կարող է կանոնավոր հիմքերի վրա դնել մատղաշ անասունների պահպանութիւնը: Հորթերին հարկավոր է տաք ու լուսավոր հորթանոց: Մենատնտես չքավոր ու միջակ գյուղացիները չեն կարող այդպիսի հորթանոց շինել մեկ կամ յերկու հորթի համար. դա ձեպիսի հորթանոց շինել մեկ կամ յերկու հորթի համար. դա ձեպիսի հորթանոց շինել մեկ կամ յերկու հորթի համար. դա ձեպիսի հորթանոց շինել մեկ կամ յերկու հորթի համար. դա ձեպիսի հորթանոց շինել մեկ կամ յերկու հորթի համար: Ընդհանուր ույժերով կառուցվող շենքը թանկ չի նստի:

Յուրաքանչյուր կոլտնտեսութեան անասնաբակին կից պիտի լինի հորթանոց:

Հորթանոցը կառուցելիս պետք է հիշել, վոր արևի ճառագայթներն ու մաքուր ողը վոչնչացնում են վարակը: Այս պատճառով շենքը պետք է հաճախ ողափոխութեան յեթարկել, իսկ հորթերին գուրս տանել: Հորթերին վոչ մի դեպքում չի կարելի պահել աղբի վրա, աղբը պետք է հավաքել: Հորթանոցում տակի փովածքը պետք է փոխել որական յերեք անգամից վոչ պակաս: Յանկալի յե, վոր յուրաքանչյուր հորթ առանձին տեղ ունենա իր համար:

Առանձնապես խիստ մաքրութեան պիտի պահպանել հորթերին ջրելու ժամանակ: Ջրելու ամանները պիտի լինեն մաքուր, պետք է լվացվեն տաք ջրով և չորացվեն արևի տակ: Ջրողները ձեռները պետք է մաքուր լինեն: Կեղտոտութեանից հորթերը հիվանդանում են փորհարկներով:

Հորթերի համար լավագույն և առայժմ անփոխարինելի կերը—գա նրանց մոր կաթն է, այսինքն կովի անարատ կաթը: Կաթի մեջ կան այն բոլոր նյութերը, վորոնք հարկավոր են հորթի մեծանալու և զարգանալու համար: Այդ նյութերն են՝ սպիտակուցները, ճարպանյութերը, վիտամինները և այլն:

Կաթի հարյուր մասից 73 մասը յուրացնում է հորթը: Այդ նշանակում է, վոր այդ 73 մասը, վոր գտնվում է կաթի մեջ, անեցնում է հորթին:

Հորթերին տրվող կաթը պիտի լինի տաք, իսկ տաքութեանը պիտի լինի այնքան, վորքան մոր կաթինը: Այդ անելը շատ հեշտ է: Պետք է յեռացրած ջուր լցնել այն ամանի մեջ, վորով կերակրում են հորթերին: Հետո յեռացրած ջուրը թափում են, իսկ ամանի մեջ կաթ լցնում: Կաթը կուսենա հենց այնքան տաքութեան, վորքան հարկավոր է հորթին:

Լավ կովեր մեծացնելու համար չպիտի լինայել հորթերին տրվող անարատ կաթը: Մենչև 4 շաբաթ նրանց անպայման պիտի կերակրել միայն անարատ կաթով: Չորս շաբաթ հետո անարատ կաթը հետոգետե պակասեցնում են, փոխարինելով սերը քաշած կաթով, խոտով, քուսպով, վարսակի ապուրով:

Ահա թե ինչպես պիտի կերակրել հորթերին.—

Մեկ քարթական հորթերին պետք է տալ մեկ ու կեսից մինչև 3 լիտր կաթ:

Յերկու քարթականին—3-ից մինչև 3 և կես լիտր:

Յերեք քարթականին—3 և կեսից մինչև 4 լիտր:

Հինգ քարթական հորթին տալիս են 3 և կեսից մինչև 4 լիտր կաթ, 50 գրամ թեփ, 50 գրամ վարսակի ապուր, 50 գրամ կտավատի քուսպ և 50 գրամ կտավատի ալյուր:

Վեց քարթականին—3 լիտր կաթ, 150 գրամ թեփ, 100 գրամ վարսակի ապուր, 100 գրամ կտավատի քուսպ և 100 գրամ կտավատի ալյուր:

Յոր քարթականին—5 և կեսից մինչև 6 լիտր կաթ, 250 գրամ թեփ, 150 գրամ վարսակի ապուր 150 գրամ կտավատի քուսպ և 150 գրամ կտավատի ալյուր:

Ութ քարթականին—Մեկ ու կես լիտր կաթ, 350 գրամ թեփ, 250 գրամ վարսակի ապուր, 350 գրամ կտավատի քուսպ և 150 գրամ կտավատի ալյուր:

Ինը քարթականին—Մեկից մինչև մեկ ու կես լիտր կաթ, 400 գրամ թեփ, 300 գրամ վարսակի ապուր, 250 գրամ կտավատի քուսպ և 200 գրամ կտավատի ալյուր:

Այստեղ ցույց է տրված կաթի (հորթին տրվող) ամենաքիչ քանակը: Դրանից պակաս կաթ չի կարելի տալ հորթերին, հակառակ դեպքում նրանք լավ կովեր չեն դառնա:

Նորածին հորթին տալիս են 1 լիտր անարատ կաթ: Մեկ որից հետո պետք է տալ յերկու լիտր: Այնուհետև 5 օրվա ընթացքում նրան արդեն տալիս են որական 3 լիտր: Հինգերորդ շաբաթից անարատ կաթն սկսում են պակասեցնել: Կաթը փոխարինում են թեփով, քուսպով, և վարսակի ապուրով, վորոնց քանակն ավելացնում են հետոգետե, աստիճանաբար:

Սակայն մեզանում մեկ կերից մյուսին անցնելիս, աստիճանականութեանը շատ քիչ դեպքերում է պահպանվում: Սովորաբար առաջին շաբաթը հորթին տալիս են անարատ կաթ, հետո սկսում են նրան տալ սերը քաշած, կամ սերը չքաշած, բայց ջուր խառնած կաթ: Վերջապես, մի անգամից դադարեցնում են կաթը և անցնում ուրիշ կերի:

Պարզ է, վոր հորթի ստամոքսը չի կարող այդպես շուտ ընտելանալ կերի փոփոխութեան: Այս պատճառով ել հորթերը հաճախ հիվանդանում են:

Հորթին հարկավոր է կաթ տալ կիսադուլլի մեջ: Իհարկե ավելի հեշտ է հորթին ուղղակի թողնել, վոր մորը ծծի, սակայն այս դեպքում հորթը շատ կաթ է ծծում: Ուստի կթած կաթ տալն ավելի ձեռնաու է:

Վորպեսզի հորթի վոսկորները լավ աճեն, նրա կերին պետք է ավելացնել ֆոսֆորա-թթվուտային կեր: Լավ է նաև նրան տալ քարաղ՝ լիզելու համար:

Հորթերին չի կարելի կապած պահել: Դրանից նրանք ձանձրանում են և լավ չեն մեծանում: Մինչև 4, նույնիսկ մինչև 5 ամիս հորթերին կարելի յե պահել միասին, բայց պետք է հետևել, վոր նրանք չծծեն իրար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՓԵՐՄԱՆԵՐՈՒՄ

Կոլտնտեսային անասնաբուծական սպորտնրային ֆերմաներում, գործավարձի նիւթ անցկացումը, վորը ընկ. Ստալինի վեց պայմաններից մեկի գործնական կիրառումն է, այդ ֆերմաների հետագա ամրապնդման և զարգացման ամենաուժեղ յժակն է:

Կաթնապրանքային ֆերմաների (ԿԱՖ-երի) սպասարկման համար կազմվում են, նայած նրանց մեծության, մեկ կամ մի քանի բրիգադներ: Վորպես կանոն, մի անասնաբուծում գտնվող մոտավորապես յուրաքանչյուր հարյուրական կովերի համար կազմակերպվում է մեկ բրիգադ: Հետևապես, յուրաքանչյուր ֆերմայում լինելու յեն այնքան բրիգադներ, վորքան ստանդարտային գոմեր կան այդտեղ: Յուրաքանչյուր բրիգադ լրիվ սպասարկում է մի գոմի անասուններին: Այդ անասուններն ամբողջում են բրիգադին առնվազն մի արժ, վորոնց նաևար նա լրիվ նյութական պասախանայություն է կրում:

Յեթե ֆերման ունի մի քանի մանր գոմ, նայած նրանց տեղերի դասավորման, կազմակերպվում են բրիգադներ 2—3 գոմերի համար, բայց և այնպես, բրիգադը պիտի սպասարկե 60 կովից վոչ պակաս ունեցող կաթնապրանքային հոտին:

Շատ պարզ է, վոր բրիգադը պետք է կազմվի այնպես, վոր ունենա անհրաժեշտ թվով անասնապահ—կթողներ, հորթապահներ, հովիվներ, գիշերապահներ և այլն: Դիմազրկության վերացման նպատակով, բրիգադի յուրաքանչյուր կոյսնեստականին ամբողջում են վորո՞ւ անասուններ և համապատասխան ինվենտար, վորոնց համար կոլտնտեսականը լրիվ նյութական պատասխանատվություն է կրում:

Գոմերում պահելուց արտավայրերն անցնելու դեպքում, ազատվում են անասնապահների պաշտոնները: Նրանց մի մասը դառնում է հովիվ, մյուս մասը անցնում է ֆերմայի ուրիշ աշխատանքներին, որինակ՝ շինարարության, վերանորոգման, սիլոսացման և այլն, բայց այն պայմանով, վոր յերբ անասունները նորից սկսեն գոմերում պահվել, այդ կոլտնտե-

սականները կրկին վերադառնան իրենց նախկին՝ անասնապահի պարտականություններին:

Բրիգադիւրը ղեկավարում է բրիգադի աշխատանքը և պատասխանատու յե նրա աշխատանքների համար: Նա պատասխանատու յե սպորտնրային արտադրանքի քանակի և վորակի համար: Նրա վրա յե ընկնում պարտականությունների և անասունների բաշխումը բրիգադի անդամների միջև, կերերի ծախսի հաշվառումը, գույքավորումների ժամանակին կատարվելու վրա հսկողությունը, կերաբաշխումներ կազմելը: Նա ֆերմայի վարչից ստանում է յուրաքանչյուր ամսի աշխատանքների պլան-կարգադիրը և հասցնում այդ բրիգադի ամեն մի անդամին: Նա տանում է նույնպես կոլտնտեսականների կատարած աշխատանքների քանակի և վորակի հաշվառումը, աշխուրերով գնահատում աշխատանքը և անցկացնում վերջինս կոլտնտեսականների աշխատանքային գրքույկները մեջ:

Բրիգադիւրի աշխատանքը գնահատվում է ըստ չորրորդ խմբի, այսինքն՝ նրա նորմալ աշխատանքի համար որական պետք է հաշվել 1,25 աշխոր: Ինչպես բրիգադիւրին, այնպես էլ բրիգադի բոլոր անդամներին աշխուրեր նշանակվում են համաձայն նրանց տրված արտադրանքի, այսինքն՝ կթած կաթի յուրաքանչյուր ցենտներից, հորթերի աճման յուրաքանչյուր ցենտներից:

Կով կթող—անասնապահուհի: Դիմազրկության վերացման և կթողի բանվորական որվա լրիվ բեռնավորման համար, կթողի և անասնապահի պարտականությունները կատարում է մի անձնավորություն: Կթողը կերակրում է, հսկում իրեն ամբողջրած կովերին: Նա հսկում է անասունների գույքավորման և իր ժամանակին հայտնում այդ մասին բրիգադիւրին կամ գոտտեխնիկին: Նրա աշխատանքը վերաբերում է յերբորդ խմբին և որական նորմալ արտադրությունը գնահատվում է մեկ աշխորով:

Անասնապահ նշանակվում է անասուններին գոմերում պահելու շրջանում 50-ական կովերի համար: Նրա պարտականությունների մեջ են մտնում՝ գոմը մաքրելը, աղբը կրելը, հարդի մատակարարումը անասունների կերակրելու և նրանց տակ փոխելու համար, կեր պատրաստելու գործում անասնապահուն ոգնություն հասցնելը, յեզերի վրա հսկելը, գույքավորումներին հսկելը: Անասնապահի աշխատանքը վերաբերվում է յերբորդ խմբին, այսինքն՝ վորձառություն չպահանջող ծանր աշխատանքներին: Որական նորմալ աշխատանքը գնահատվում է մեկ աշխորով:

Կարճահաւելարարուի պիտի ունենա յուրաքանչյուր բրի-
գադը: Կթելու ժամանակ կաթնահաշվարարուէին սասնում ե
կաթը կթողնեբից, կատարում ե յուրաքանչյուր կթողի աշխա-
տանքի, յուրաքանչյուր կովի արտադրողականութեան հաշվա-
ռումը, հսկում ե կաթի քամելուն, պղղելուն ե կաթնամթեր-
ման կայանը տանելուն: Նրա աշխատանքը վերաբերվում ե
չորրորդ խմբին ե գնահատվում ե 1,25 աշխորով:

Հերթապահուիին պարտավոր ե ջրել ե կեր տալ հորթե-
րին, մաքուր պահել հորթանոցը ե ինվենտարը, հսկել հորթե-
րի առողջութեանը ե հիվանդութիուն պատահելու դեպքում
անմիջապէս հայտնել անասնաբուժական պետնալին: Հորթա-
պահուէիները աշխատանքը վերաբերվում ե յերրորդ խմբին
ե գնահատվում ե մեկ աշխորով:

Հորթերին խնամող անասնապահուիին հորթեր աճեցնող
Ֆերմաներում պարտավոր ե ջրել, մաքրել հորթերին, պա-
րտատել կերեր, դուրս հանել աղբը: Սպասարկման նորման՝
մինչև մի տարեկան 35 հորթ: Նրա աշխատանքը վերաբերվում
ե յերրորդ խմբին, հաշվվում ե մեկ աշխոր:

Գիշերապահը նշանակվում ե յուրաքանչյուր բրիգադում
ամեն մի գոմի համար, իսկ յեթե գոմերը փոքր են, նայած
նրանց տեղերի դասավորման, կարող ե նշանակվել 2—3 գո-
մի համար: Նրա պարտականութիւնն ե՝ հսկել, վոր ուրիշ
մարդիկ չմտնեն ֆերման, հսկել հղի կովերին, մաքրութեան,
քերել աղբը: Նրա աշխատանքը վերաբերում ե յերրորդ խմբին
ե գնահատվում ե 0,75 աշխորով:

Հովիվը սահմանված ժամանակաընթացքում արածացնուս
ե անասուններին, հող ե տանում ժամանակին նրանց ջրելու
մասին, վորոշված ժամին քշում ե նրանց գոմերը: Նա հետե-
վում ե կովերի զուգավորելու ժամանակին ե հայտնում այդ
մասին բրիգադիին՝ զուգավորում կատարելու համար: Նա
հետեւում ե նույնպէս անասունների առողջութեանը: Հովի-
կ ե նրա ոգնականի բեռնավորման նորման՝ 100 կով կամ 70—80
հորթ ե: Հովիվ աշխատանքը վերաբերվում ե 3-րդ խմբին ե
գնահատվում ե մեկ աշխորով: Հովիվի ոգնականինը՝ յերկրորդ
խմբին (գնահատվում ե 0,75 աշխորով):

Անասնաբույժ-սանիտար նշանակվում ե ֆերմաներում
յուրաքանչյուր 300 կովի համար: Նրա պարտականութիւնն
ե՝ առաջին ոգնութիւնը հասցնել կենդանիներին, իր ժամա-
նակին ջրել հիվանդ կենդանիներին, ոգնութիւն հասցնել
ծննդաբերութեան ժամանակ, ախտահանել շենքերը, հսկողու-

թիւն ունենալ անասնագերեզմանոցի վրա ե այլն: Աշխա-
տանքը վերաբերվում ե չորրորդ խմբին ե գնահատվում ե 1,25
աշխորով:

ԱՆԵԱՏԱՆԷԻ ԳՈՐԾԱՎԱՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԿԱԹՆԱԳ- ՐԱՆԲԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ (ԿԱՖ-ԵՐՈՒՄ)

ԿԱՖ-երում աշխատանքի գործավարձային գնահատում
սահմանելու համար պետք ե վորոշել բրիգադի յուրաքանչյուր
անգամի՝ համար անասուններին սպասարկելու, նրա բեռնավոր-
ման նորման ե անասնի արտադրողականութեան համապա-
տասխան, նաև արտադրանքի նորման:

Բեռնավորման նորման, այսինքն՝ ինչքան պետք ե
սպասարկել կորսնտեսական անասուններին՝ այս կամ այն
աշխատանքի ժամանակ, կախված ե գոմերի սարքավորումից,
սպասարկման աշխատանքների մեքենայացումից, անասուննե-
րի արտադրողականութիւնից ե տեղական այլ պայմաններից:
Այսպէս, որինակ՝ լավ սարքավորած գոմերում, ուր մեքենա-
յացման են յեթարկված կեր տալը, ջրելը ե աղը հա-
վաքելը, անասնապահը կարող ե սպասարկել ավելի մեծ թը-
վով կովերի: Առատ կաթ ավող կովերին ավելի դժվար ե
սպասարկել, քան քիչ կաթ ավող կովերին: Հովիվ բեռնավո-
րումը կախված ե արտադրայից—տնտեսային, տափաստա-
նային, ընական, ցանովի:

Արտադրանքի նորման կախված ե բեռնավորումից ե
անասնի արտադրողականութիւնից: Վորքան ավելի արդյու-
նավետ լինի անասունը, այնքան ել ավելի բարձր կարող ե
լինել արտադրանքը: Այսպէս, որինակ՝ յեթե կովերը տալիս են
որական յերեքական լիտր կաթ, այդ դեպքում կթող-անասնա-
պահուէու համար արտադրանքը կարող ել ինել ընդամենը 30—36
լիտր (բեռնավորում 10—12 կով): Իսկ յեթե կովերը միջին
թվով տալիս են ութական լիտր, այն ժամանակ նույն իսկ
8 կովի բեռնավորման դեպքում, կթող-անասնապահուէու ար-
տադրանքը կլինի 64 լիտր:

Մտողաշներին աճեցնելիս արտադրանքը ցենաներնեբոյ
ավելացածի ձևով բարձր ե լինելու այն դեպքում, յեթե աճեց-
վում են հատկապէս մասցու տեսակի հորթեր ե առատ քա-
նակութեամբ ուժեղ կերեր լինելիս:

Արտադրանքի նորմաները նմանապէս միատեսակ չեն լի-
նելու տարվա տարբեր ժամանակամիջոցներին: Գարնանը ե ա-
մառը նրանք ավելի յեն լինելու, համեմատած ձմեռվա հետ ե

նույնիսկ տարվա նույն ժամանակամիջոցում նրանք զգալի կերպով տարբերվելու յեն:

Ահա ինչ պատճառով արագորակի նորմաները պիտի սահմանել վոչ քե ավրոյոջ արվա համար, այլ կվարտայի կամ նույնիսկ մի ամսվա համար: Արտադրանքի նորմաները սահմանելիս, հիմք պետք է ընդունել լավագույն հարվածայինների արագորակի նորման:

Սահմանելով արտադրանքի նորման և վորոշելով, թե վոր խմբին է վերաբերվում ըստ աշխատանքի գնահատության այս կամ այն աշխատանքը, դժվար չէ վորոշել և աշխատանքի գործավարձային գնահատումը աշխուրերով, աշխատանքի քանակից և վորակից:

Մինչև 1932 թ. ըստ սպասարկվող անասունների քանակի, կիրառվող գործավարձից տարբերելու համար, այժմ գործավարձային գնահատումները սահմանվում են միայն՝ հավաճային անասնից կիրառվաներով յեվ ցենսներներով ստացված մթերքների:

Յենթադրենք, վոր ԿԱՑ-երի կովերի արդյունավետությունը ցածր է՝ 1200 լիտր (12 ցենտներ) տարեկան և կթող-անասնապահուհու համար ընդունված է 12 կովի բեռնավորում: Հետևաբար նա բոլոր ամբացված կովերից կհանձնի 12 ցենտ. $\times 12 = 144$ ցենտներ: Նրան նրա տարեկան նորմալ արտադրանքի համար պետք կլինի հաշվել 1 աշխոր $\times 365 = 365$ աշխոր (նրա աշխատանքը վերաբերվում է յերրորդ խմբին) Ուրիշ խոսքով, 144 ցենտների համար կթող-անասնապահուհուն յաշվում են 365 աշխոր, իսկ 1 ցենտների համար՝ 365 աշխորը: $144 = 2,53$ աշխորի: Նույնպես էլ մեկ լիտրից կամ ցենտներից սահմանվում է բրիգադի, անասնապահի, հորթ խնամողի և ուրիշների աշխատանքի գործավարձային գնահատումը:

Յերկրային կաթնային կուտակենտրոնը նշում է մոտավորապես հետևյալ բեռնավորման նորման և աշխատանքի գնահատման աշխուրերով ստացված արտադրանքից (տես № 1 աղյուսակը):

Մտողաշներին աճեցնելիս, աշխատանքի գործավարձային գնահատումը ՄԱՑ-ում (մտողաշներին աճեցնող ֆերմա) սահմանվում է համաձայն ավելացածի, ինչպես և այն կուտակե-սականների համար, վորոնք սպասարկում են կրվող կովերին-1 լիտր կաթից: (տես № 2 աղյուսակը):

Պաշտոն	Խումբ	Ցարեկան ստան-գած քանակը մի օրում կամ օրում քանակը	Բեռնավոր. գրու-նի խումբ	Արտադրական արտադրանքի արտադրանքի քանակը	Չափանք փոխար-կում	Անասնաբեր չափ-ման միավորի գնա-հատումն աշխուրե-րով
Կթող-անասնապահուհի	3	3— 5	12	48	10	0,21
		5— 7	11	66	»	0,15
		7—10	10	85	»	0,11
		11—12	9	105	»	0,09
Կովերին խնամող անաս-նապահ	3	3— 5	30	200	100	0,50
		5— 7	»	300	»	0,33
		7—10	»	405	»	0,25
		11—12	»	575	»	0,17
		Հովիվ	3	4*)	100	400
Հովիվ ողնական	2	6		600		0,16
		7,5		850		0,11
		10,5		1050		0,10
		4	100	400	100	0,18
		6		600		0,12
Կաթնահաշվարարուհի	4	7,5		850		0,08
		10,5		1050		0,07
		3— 5	100	400	100	0,30
		5— 7	»	600	»	0,20
		7—10	»	850	»	0,14
10—11	»	1050	»	0,11		

*) Արտատեղային ժամանակամիջոցի կամ տվյալ ամսվա որական կաթի քանակը:

Պ ա շ ա ս ն	Թ	ժամանակա- միջոց	Բնածանրում խմորի քանակը	Կծ գրամում տ գրամում զեռք	Նոսոսում գրամում զեռք	Մեխրոսում նի գրամում	Նի շեխում գրամում	Չափանիշ գրամում	Չափանիշ գրամում	
4 ամսականից մինչև 1 տարեկան հորթե- րին խնամող հոր- թապահունքի . . .	3.	Ախոռային պայմ.	35	0,3	10,5	1	0,095	0,095	0,095	
				0,4	14	»	0,071			
				0,5	17,5	»	0,057			
		Արտատեղ. պայմ.	70	0,3	21	1	0,047	0,047	0,047	0,047
				0,4	28	»	0,036			
				0,5	35	»	0,029			
1-ից մինչև 3 տա- րեկան մատղաշնե- րին խնամող ա- նասնապահ	3.	Ախոռային պայմ.	40	0,3	12	1	0,08	0,08	0,08	
				0,4	15	»	0,062			
				0,5	20	»	0,05			
		Արտատեղ. պայմ.	80	0,3	24	1	0,04	0,04	0,04	0,04
				0,4	32	»	0,03			
				0,5	40	»	0,02			
Հ ո վ ի վ	3.		70	0,3	21	1	0,04	0,04	0,04	
				0,4	27	»	0,03			
				0,5	38	»	0,02			
Հովվի ոգնական .	2.		70	0,3	21	1	0,03	0,03	0,03	
				0,4	28	»	0,02			
				0,5	36	»	0,02			

Հովվի և հովվի սգնականի բեռնավորումը մեկ տարեկա-
նից ավելի հորթերին խնամելու համար—80 գլուխ: Առաջին աշ-
խատանքը վերաբերվում է յերրորդ խմորին, իսկ յերկրորդինը
յերկրորդ:

Ինչ-ինչ պատճառներով յերկար ժամանակով չբերք մնա-
ցած, ցամաքած կովերին, նույնպես և ցեղային յեղներն խնա-
մող անասնապահների հաշվումները կատարվում են՝ հաշվի առ-
նելով անասունների քանակն ու դրուժյունը: Անասնապահ-
ների համար բեռնավորումը ախոռային ժամանակամիջոցում
25 կով է և արտատեղային ժամանակամիջոցում—50,
իսկ արտադրող յեղներին խնամողների համար—7 գլուխ:
Առաջինների աշխատանքը վերաբերում է յերկրորդ խմորին,
իսկ յերկրորդներինը—յերրորդ: Այսպիսով անասուններին
գյուղերում պահելու ժամանակամիջոցում, անասնապահը յու-
րաքանչյուր նորմալ պարարտություն ունեցող կովի համար
ունենում է 0,03 աշխոր, իսկ յեղապահը՝ 0,14 աշխոր մի յե-
զան համար:

Բրիգադիքը նշանակվում է 150—200 հորթերի համար և
նրա աշխատանքը գնահատվում է նույնպես գործավարձով,
հաշվի առած նրանց աճը:

Բրիգադին ամբողջ կազմով ստանում է ֆերմայի վարչից
մի ամսվա համար արտադրական առաջադրություն, համաձայն
վորի, վորոշված ժամկետին պետք է ստանա աշխորերով գնա-
հատված վորոշ քանակի մթերք (կաթ կամ ավելացած անա-
սուն): Նույն այդ առաջադրության մեջ ցույց է տրվում նաև,
թե ինչ և ինչքան կեր և նյութ կարող է ծախսվել բրիգադի
կողմից: Նրա հետ միասին կարգադրում մատնանշվում է բրի-
գադի կոլանտեսականների համար անհատական առաջադրու-
թյուն, վորը լրացնում է բրիգադիքը: Առաջադրությունը քն-
նարկվում է արտադրական խորհրդակցությանը և ընդունվում
բրիգադիքի ստորագրությամբ:

Պլան-կարգադրով առաջադրության կատարման ժամկեան
անցնելուց հետո, կատարվում է բրիգադի աշխատանքի
հետևանքների հաշվետեսը: Նշանակվում է բրիգադում յուրա-
քանչյուր մասնակցողին և ամբողջ բրիգադին տրված առաջա-
դրության փաստացի կատարումը: Վորոշ սյունյակում նշանա-
կում է բրիգադի յուրաքանչյուր անդամի կողմից առաջա-
դրության գերակատարումը կամ թերակատարումը և վորքան
աշխոր է նրան հաշվվում: Հատուկ ցուցակում հաշվարկվում
է կերերի ծախսը: Գերի կամ անասունների տակը լցվող հար-

իդ տնտեսման ղեկընում (յեթե դա չի վնասել արտադրութեանը), ամբողջ բրիգադին կամ առանձին կոլտնտեսականներին, յեթե հայտնի չե, թե իսկապես ով է այդ տնտեսումը կատարել, գրվում է պարզև՝ աշխորերով: Գերաձխսելու ղեկընում նրա արժեքը դուրս է գրվում գերաձխսողների հաշվից: Ինվենտարի կորստի կամ փչանալու ղեկընում, նրա արժեքն ամբողջութեամբ դուրս է գրվում նույնպես այդ վնասը հասցնողներից:

Յեթե տվյալ ժամանակամիջոցում սատկել է անասունը կոլտնտեսականի մեղքով, այն ժամանակ այդ անասնի արժեքը դուրս է գրվում նրանից:

Լավ աշխատանքի համար սահմանվում է պարզև աշխորերով: Առաջարկվում է իբրև որինակ, աշխորերի հավելյալ հաշվման հետևյալ ձևը.

Կթող-անասնապահուհու համար՝
ա) Կովի յուրաքանչյուր անգամ հաջող ծնելու ղեկընում՝ 0,5 աշխոր:

Հորթապահուհու համար՝ յուրաքանչյուր մինչև յերեք ամսական հորթի պահպանման ղեկընում՝ 1,0 աշխոր:

Անասնապահի համար՝
Յեզներ լավ դրութեամբ լինելու ղեկընում՝ գրվում է ամսական 1—2 աշխոր:

Բրիգադների և ֆերմաների վարիչների համար՝ ամսական պլանի 10⁰/₀-ով գերակատարելու ղեկընում՝ 2 աշխոր, 20⁰/₀-ով գերակատարելու ղեկընում՝ 3 աշխոր, 40⁰/₀ 4 աշխոր:

Որինակելի խնամքի և կարգապահութեան ղեկընում, աշխորեր պետք է գրել նաև անասնաբուժ սանիտարին, կաթնահաշվարարուհուն և պահապանին:

Առաջադրութունների թերակատարման և աշխատանքի վատ վորակի համար պետք է աշխորերից դուրս գալ՝

Կթող-անասնապահուհուց—կովերի գուգավորումը բաց թողնելուց առաջին անգամ՝ 1 աշխոր, յերկրորդ անգամ՝ 3 աշխոր:

Անասնապահից-արտադրող-յեզների վատ դրութեան համար՝ դուրս գալ ամսական 2—3 աշխոր:

Հորթապահուհուց—վատ խնամելու պատճառով յուրաքանչյուր սատկած հորթի համար—3 աշխոր:
Ֆերմայի վարչից և բրիգադիերից—ամսական առաջադրութունը չկատարելու համար՝
ա) 10⁰/₀-ով—2 աշխոր:

բ) 20⁰/₀-ով—3 աշխոր.
գ) 20⁰/₀-ից բարձր—4 աշխոր և աշխատանքից հեռացում:
Կոլտնտեսականների աշխորերի ավելացնելն ու նվազացնելը կատարում է բրիգադիերը, իսկ բրիգադիերինը, ֆերմայի վարիչը, պորից հետո հաստատում է վարչութունը:

ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի վորոշման համաձայն, յուրաքանչյուր կոլտնտեսութունում ստեղծվում է պարզևատրման ֆոնդ՝ ընդհանուր յեկամտի 3 տոկոսի չափով: Այդ պարզևատրումը պետք է կատարվի փող, արդյունաբերական օպրանքներ տալու, կուրորտներ, եկսկուրսիա, հանգստյան տներ ուղարկելու միջոցով:

Պարզևատրումը պետք է կատարվի հետևյալ ցուցանիշներով.

- ա) Կաթի, անասունների աճի, անասունների բազմանալու առաջադրութունների սխտեմատիկաբար գերակատարում:
- բ) Մթերքների բարելավում:
- գ) Հորթերի սատկելու տոկոսի իջեցում:
- դ) Կերերի տնտեսաբար ծախսում:
- ե) Ձբերք կովերի տոկոսի իջեցում:
- զ) Գյուտարարութուն և ռացիոնալացում:

Պարզևների բաշխումը պետք է կատարվի կոլտնտեսականների ընդհանուր Ժողովների միջոցով, բրիգադային ֆերմաների արտադրական խորհրդակցութեանը նախապես մշակելուց հետո:

Բոլոր ավելցումներն ու պակասեցումները կատարվում են հատուկ ցուցակում այնպես, վորպեսզի բրիգադի յուրաքանչյուր անգամ կարողանա տեսնել իր աշխատանքի արդյունքները և համեմատի բրիգադի մնացած մասնակցողների աշխատանքների արդյունքների հետ:

ԸՆԿԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐ

Այս գրքի մասին նամակներ ուղարկեցեք մեզ: Գտեք դյուղատնտեսական մասսայական գրքերի պակասութունները և ռզնեցեք դրանց վերացնելու համար:

- Գրեցեք թե՛
- 1) Գիրքն ինչ նոր և հետաքրքիր բան տվեց:
 - 2) Նա ինչ ոգուտ ավեց ձեզ գյուղատնտեսական աշխատանքները կատարալիս:
 - 3) Ինչն է գրքում անհասկանելի, ինչ հարցերի մասին եք ուղղում կարդալ:



5) Արդյոք մատչելի՞ յե գրքի գինը:

6) Ուրիշ ի՞նչ գիտողություններ ունեք:

Չմոռանաք հայանել ձեր հասցեն, ազգանունը, սոցիալական դրությունը (կոյրնտեսական և այլն): Չմոռանաք գրել նաև այն գրքի անունը, վորի մասին կարծիք եք հարցնում:

Նամակներն ուղարկեցեք հետևյալ հասցեյով.—

գոր. Ростов дон, Буденовский пр. № 30, Изд—во

«Северный Кавказ» Армянский сектор.

Բ Ո Վ Ա Ն Կ Ա Կ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

ԿԱՅ-երի շինարարությունը յերկրամասում և նրանց զերը կաթնասնտեսության զարգացման մեջ	2
Լավացնենք մեր անասուններին կերակրելը	5
Ի՞նչպես բարելավել կաթնա-անասունների տեսակը	6
Կանոնավոր զուգավորումը հորթերի առողջության գրավականն է	8
Ի՞նչպես պահել կովերին	11
Ի՞նչով կերակրել կովերին	15
Կանոնավորենք անասունների կերակրումը	17
Հղի կովի խնամքը	22
Հորթերի խնամքը	23
Աշխատանքի կազմակերպումը ֆերմաներում	26
Աշխատանքի գործավարձային գնահատումը կաթնա-ապրանքային ֆերմաներում	29



Отв. редактор
А. Г. Авакьян
Техн. редактор
Г. М. Маркарян

2735
ԲԵ—43

Сдано в наб. 25 IX 1932 г.
Сдано в печ. 21/X 1932 г.
Об'ем 2¹/₂ печ. листа
Тираж 2000 экз.

Уполкрайлита № 1794, Ростов н-Д. Гва.мн. тип. СКНГО Ст. форм. А5-148*214. Зек. № 5019

«Ազգային գրադարան»

NL0301191

44

22.047

цена 100 руб

157
1/433

414781

917



На армянском языке

Н. Ломов

УХОД ЗА КОРОВОЙ И ТЕЛЕНКОМ

ИЗД-ВО „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ՀԻՎԱԿԱՆՈՒՄ

ՊԱՏՈՒԿ-ԴԻՆ, ԱՍՈՎՈՎՈՒՄՈՒ ՓՈՐ, 53

ՔՐՈՎՆԵՐՈՒ (ՉԵԳՈՅԵՆՈՒ)